

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 450 ՏԱՐԻՆ

Ա. Ս. ԲԱՐԱՅԱՆ

Անցյալ տարի լրացավ հայ տպագրության 450 տարին: 1512 թվականին հեռավոր Վենետիկ քաղաքում լույս տեսավ հայերեն առաջին տպագիր գիրքը: Այդքան վաղ ժամանակներում, Դուտենբերգի գյուտից մոտ 55—60 տարի հետո, հայերեն տպագիր խոսքի երևան գալը խոշոր երևույթ էր հայ մշակույթի պատմության մեջ: Հայ ժողովուրդը դարեր շարունակ տառապել է օտար լծի տակ: Առանձնապես ծանր է եղել նրա վիճակը վերջին հինգ դարերում՝ Թուրքիայի և Իրանի բռնակալության ներքո: Արևելքի հետամնաց, ավատական տյոգերից հայ ժողովրդի կյանքի ապահովության համար ոչ միայն նվազագույն պայմաններ չէին տա իս, որի հետևանքով և շարունակվում էր հնուց սրգեն սովորություն դարձած նրա արտագաղթը դեպի օտար հորիզոններ, այլև հնարավորություն չէին ստեղծում կուլտուր-կրթական որևէ աշխատանքի, այդ թվում և տպագրության համար: Այս պարագաներում հայ ժողովրդից առանձին խմբեր թողնում էին հայրենի հողը և օտար երկրներում էին փնտրում նպաստավոր պայմաններ՝ լուսավորական գործունեության համար: Հեռավոր վայրերում նրանք հիմնում էին տպարաններ, ստեղծում տպագիր գրականություն և առանց ջանք խնայելու նվիրվում հարազատ ժողովրդի կուլտուր-լուսավորական գործին: Այս տեսակետից պատահական չէ, որ առաջին հայերեն տպագիր գիրքը լույս ընծայվեց Վենետիկում և ոչ թե հայրենի հողում:

Վենետիկը առաջին քաղաքներից մեկն էր, ուր դեռևս 1469 թ. մուտք էր գործել Դուտենբերգի գյուտը: Եվ այն ժամանակ, երբ այստեղ լույս տեսավ առաջին հայերեն տպագիր գիրքը, Վենետիկում գործում էին արդեն 200-ից ավելի տպարաններ: Մեր առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը չէր կարող անտարբեր մնալ Վենետիկի տպագրական ու հրատարակչական եռուզեռի, ժողովրդի զարգացման գործում տպագրության ունեցած դերի նկատմամբ: Նա առաջին էր հայ իրականության մեջ, որ օգտվեց այդ գյուտից՝ անմահացնելով իրեն մեր մշակույթի պատմության մեջ: Հակոբ Մեղապարտը, որ հավանաբար ունեցել է և իր գործակիցները, հայկական բոլորագրի հիման վրա ստեղծում է հայկական տպագրական տառեր և 1512—1513 թթ. տպագրում հինգ անուն գիրք: Դրանցից առաջինը, որ լույս է ընծայվել 1512 թ. (մեր առաջին տպագիր գիրքը) կոչվում է «Պարզատումար»: Նրա մեջ ցույց են տրված եկեղեցական տոները, նաև մեկնաբանություններ հետևյալ ենթաբաժիններով՝ «Սաղանդացույց», «Նշանացույց», «Երազացույց», «Ծննդեան տշայուց» և «Մարմնախաղաց»: Հետևյալ՝ 1513 թ. Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերն են՝ «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Աղթարք» և «Տաղարան»: Այս հրատարակությունների շարքում առանձնապես ուշագրության արժանի է վերջինը՝ «Տաղարանը», որը մի ժողովածու է և բովանդակում է մեր միջնադարի բանա-

ստեղծներ Հովհաննես Թլկուրանցու, Ֆրիկի, Մկրտիչ Նաղաշի տաղերը, ինչպես նաև Ներսես Շնորհալու 137 շափածո հանելուկները:

Վենետիկը, առաջին հալ տալաղիր գրքերից հետո, դեռևս երկար ժամանակ նշանակալից դեր է կատարել հայերեն գրքերի հրատարակության բնագավառում: Իսկ երբ 1717 թ. Մխիթար Սեբաստացին իր միարանությունը փոխադրում է Ս. Ղաղար կղզին, Վենետիկը դառնում է հայ մշակույթի խոշոր օջախներից մեկը:

Մինչև Մխիթարյանների տալարանի հիմնումը, Վենետիկում հրատարակվել են հայերեն շատ գրքեր: Դրանք տալաղրվել են գերադանցապես իտալական տալարաններում: Եղել են նաև մեկ-երկու հայկական տալարաններ, որոնք ունեցել են կարճատև կյանք: Այդ շրջանում հրատարակված գրքերից իրենց տալաղրությամբ առանձնապես աչքի են ընկնում «Ճաշոցը» (1686), Մխիթար Սեբաստացու հրատարակությամբ՝ «Աստվածաշունչը» (1733), նրա հիսուն տարվա մանրակրկիտ աշխատանքի արդյունք երկհատոր «Հայկազյան բառարանը» (1749—1769), Միքայել Զամչյանի եռհատոր «Հայոց պատմությունը» (1784—1786) և այլն:

1789 թ. Ս. Ղաղար կղզում հիմնվում է Մխիթարյան միարանության տալարանը: Այստեղ տալաղրվել են բազմաթիվ գրքեր՝ պատմա-բանասիրական, աշխարհագրական, կրոնական և այլ բովանդակությամբ, ինչպես նաև գեղարվեստական գրականություն: Գնահատելի աշխատանք է կատարված հատկապես հայագիտական գրականության հրատարակության բնագավառում: Տալաղրվել են ոչ միայն արժեքավոր հայագիտական ուսումնասիրություններ, այլև առաջին անգամ այստեղ է, որ գիտական հոդի վրա է դրվում հայ պատմիչների և ուրիշ դասական հեղինակների երկերի հրատարակությունը: Վենետիկում է տալաղրվում 1843 թ. սկսած և մինչև այսօր շարունակվող ամենաերկարակյաց հայ սլարերականը՝ «Բազմավեպ» ամսագիրը:

Վենետիկից հետո հետզհետե տալաղրության օջախներ են ստեղծվում Արևմտյան Եվրոպայի տարրեր բաղաբներում, Թուրքիայում, Իրանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Ամերիկայում և այլուր: Աշխարհի բազմաթիվ երկրներում գոյություն են ունեցել հայկական տալաղրության օջախներ: Դրանց Ուիլբ մի քանի հարյուրի է հառնում, որոնցից մոտ երեք տասնյակը հանդիսացել են կարևորագույն մշակութային կենտրոններ: Գանգ չառնելով բոլոր այդ օջախների հրատարակչական գործունեության վրա, այստեղ մենք կտանք բնականուր ծանոթություններ դրանցից միայն մի քանիսի մասին:

Վենետիկի Մխիթարյան միարանության մի հատվածը XVIII դ. երկրորդ կեսերին անջատվելով միարանությունից՝ 1772 թ. հաստատվում է Թրիեստ քաղաքում, որտեղ երեք տասնամյակի ընթացքում հրատարակում է մի շարք խնդիրույն ու թարգմանական հայերեն և հայատառ թուրքերեն գրքեր: 1810 թ. Թրիեստի Մխիթարյանները փոխադրվում են Վիեննա և ստեղծում Վիեննայի Մխիթարյան միարանությունը: Այստեղ նրանք 1812 թ. հիմնում են իրենց տալարանը: Տալաղրության այս օջախում նշանակալից աշխատանք է տարվել (մասնավորապես հայագետ Ա. Այարնյանի կողմից) հայկական պոլիգրաֆիայի դարգացման՝ հատկապես տալաղրական տառատեսակների հորինման գործում: Վիեննայի Մխիթարյանները տալաղրել և հրատարակել են բազմաթիվ գրքեր՝ պատմա-աշխարհագրական, բնագիտական, կրոնական, ուսումնական, գեղարվեստական և այլ բովանդակությամբ: Սակայն Վիեննայի Մխի-

խարյանների գրական-հրատարակչական գործունեությունը նշանավոր է գերազանցապես հայագիտական ուսումնասիրություններով ու դրանց հրատարակություններով: Մեծ արժեք է ներկայացնում այնտեղ հրատարակվող «Աղգային մատենադարան» հայագիտական մատենաշարը, որը առ այսօր ընդգրկում է հայ և օտարազգի հայագետների 200-ից ավելի աշխատությունները: 1887 թ. Վիեննայում հրատարակվեց հայագիտական «Հանդես ամսօրյա» պարբերականը, որը շարունակվում է մինչև այսօր:

Արևմտյան նվթույացում, բացի Վենետիկից, Քրիեստից և Վիեննայից, XVII—XVIII դարերում հայկական տպագրական օջախներ են ստեղծվում Հռոմում (դեռևս XVI դարից), Լիովում, Միլանում, Փարիզում, Լիովոնոյում, Ամստերդամում, Մարսելում, Լալայիցիում, Լոնդոնում և ուրիշ քաղաքներում: Դրանց մեջ առանձնապես աչազրավ է Ամստերդամի օջախը: Հոլանդիայի այս նշանավոր քաղաքում XVII դ. երկրորդ կեսերից կազմակերպվում է հայկական տպագրական կենտրոն, որի շուրջը հավաքված են եղել Հայաստանից եկած մի խումբ մարդիկ: Երանց մեջ առանձնապես աչքի է ընկնում Սսկան Երևանցին, որն իր կյանքը նվիրեց հայ գրքի ու տպագրության զարգացմանը: Այստեղ բացի օջախի հիմնադիր Մատթեոս Մարեցուց և Սսկան Երևանցուց աշխատել են Ավետիս Ղլիճենցը (Սսկանի եղբայրը), Կարապետ Ագրիանացին, Քովմա Նուրիճանյանը, աչնուհետև Նուրիճանյանի ազգականներ՝ Մատթեոս, Միքայել և Ղուկաս Վաճանդեցիները, որոնք տպագրիչ ու հրատարակիչ լինելուց բացի, եղել են նաև գրքերի հեղինակներ:

Փարիզում հայերեն գրքերի տպագրությունը սկսվել է դեռևս XVII դ. առաջին կեսից՝ 1633 թ.: Սակայն տպագրական այս օջախը իր զարգացումն է ապրել հատկապես XIX դարում և հետագայում: Գրքերի ու պարբերականների տպագրություններից բացի Փարիզում զարգանում է նաև հայ պոլիգրաֆիան: Այստեղ զարգացել է և հայագիտությունը, որով զբաղվել են գերազանցապես ֆրանսիացիները (Կարիեր, Վ. Լանդուա, Ա. Մեյե, Ֆր. Մակլեր, Լ. Մարիես, Է. Բենվենիստ, Ֆր. Ֆելյի, Ժ. Դուրկև և ուրիշներ): Հայերեն գրքերը տպագրվում էին ֆրանսիական տպարաններում: Հետագայում հիմնվում են նաև հայկական տպարաններ: Բանասեր Կարապետ Եահնադարյանը 1856 թ. ստեղծում է եր սեփական գրաշարանոցը և ֆրանսիական մի տպարանում տպագրում գրքեր: Նա 1857—64 թթ. ընթացքում «Շար հայ մատենագրաց» մատենաշարով տպագրել և հրատարակել է մեր մի քանի պատմիչներին: Այստեղ են հրատարակվել Ստ. Սսկանի «Արևելք», «Արևմուտք» պարբերականները:

Մեր տպագրական տառերը, որ ստեղծվել էին դեռևս XVI դ., ժամանակի ընթացքում կրել էին որոշ փոփոխություններ, ունեցել էին որոշ զարգացում: Այս գործում նշանակալից աշխատանք էր կատարվել Սսկան Երևանցուց սկսած մինչև Պոլսի գրաձուլիչ-տպագրիչներ Արամյանն ու Մուհենտիսյանը: Սակայն հայկական տպագրական տառերը մնում էին հիմնականում նույնը: Նրանցում մեծ փոփոխություն մտցվեց Փարիզի տպագրական օջախում, XIX դ. կեսերին: Նոր հորինված այդ տառերը, չտարբերվելով ավանդական տպագրական տառերից (մենսրոյան գրերից), նոր ձև, նոր տեսք ունեին: Դրանք ուղղաձիգ էին. կլոր տեսքով և իրենց զծագրերով, կազմովում ու բնույթով մոտենում էին լատինական տպագրական տառերին: Հայկական տպագրական տառերի մեծ աչղ փոփոխությունը կատարեց վիմագրիչ, փորագրիչ, գրաձուլիչ, տպագրիչ ու գրող Ճանիկ Աբամյանը, որի հորինած տառերը մինչև հիմա էլ կոչվում են

ներառնումով՝ առաջին տառերը 1859 թ. Արամյանը հիմնում է իր սեփական տպարանը, որտեղ իր տպերով սկսում է տպագրել գրքեր ու պարբերականներ։ Բ. դեղ, Մ. Նալբանդյանի «Երկու տողը» հրատարակվել է այդ տպարանում։ Ճանիկ Արամյանի կատարած այդ բարեփոխությունը նշանակալից երեւոյթն ու համարձակ քաղ էր հայկական տպագրական տառերի պարզացման գործում։

XVII—XVIII դարերում տպագրական օջախներ են ստեղծվում նաև Արևելքի երկրներում՝ Իրանում, Թուրքիայում, Հնդկաստանում։ Հնդկաստանում է, որ հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծվում են քաղաքական բովանդակությամբ գրքեր։ Այդ գրքերի հրատարակության նախաձեռնողն էր Շահամիր Շահամիրյանը, որը մադրասահայ գաղութի մշակութային ու կրթական կյանքի ակտիվորդն էր։ Եղել է նա իր որդի Հակոբի անունով Մադրասում հիմնում է մի տպարան՝ առաջին հայկական տպարանը հնդկահայ գաղութում, որտեղ նախ տպագրում է մի «Այբբենարան» (1772), ապա՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772) և «Որոգայթ փառաց» (1773) քաղաքական բնույթի նշանավոր գրքերը, որոնք մեծ դեր են խաղացել մեր հաւարակական-քաղաքական կյանքում։ Երկրորդ տպարանը Մադրասում հիմնել է Հարություն Շամափոնյանը XVIII դ. 80-ական թվականների վերջերին։ Այն գործել է մինչև հաջորդ դարի քսանական թվականները։ Այստեղ տպագրվել են բրահմի և փիլիսոփայական բովանդակությամբ մի շարք գրքեր, որոնցից մի բանիսը՝ առաջին հրատարակությամբ։ Այս տպարանումն է տպագրվել առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը» (1794—1796), որի խմբագիրն ու հրատարակիչն է եղել ինքը՝ Հարություն Շամափոնյանը։

Հնդկաստանի Կալկաթա քաղաքում առաջին հայկական տպարանը հիմնել է Հովսեփ Ստեփանոսյանը XVIII դ. 90-ական թթ.։ Այս տպարանումն է, որ առաջին անգամ տպագրվել է Արաճառ Կրետացու «Պատմությունը» (1796)։ Տպարանի հիմնադրման ժամանակից մինչև անցյալ դարի 70-ական թթ. հալկաթայում հիմնվել են տասից ավելի հայկական տպարաններ, որոնցից համեմատաբար ավելի բեղմնավոր են եղել «Հայկական մարդասիրական ճեմարանի» և «Արարատյան ընկերության» տպարանները։ Հայկական այս գաղութում տպագրված գրքերը իրենց բովանդակությամբ բազմազան են։ Հրատարակվել են պատմական, աշխարհագրական, ուսումնա-դաստիարակչական, թատերական, գեղարվեստական, կրոնական և այլ բովանդակությամբ գրքեր։ Այս գաղութումն է գործել Արուստանի ժամանակակից, հայ գրականության նոր շրջանի նշանավոր գեմբերից մեկը՝ Մեսրոպ Քաղիաղյանը, այստեղ են հրատարակվել նրա «Ազգասեր» (1845—1848) և «Ազգասեր Արարատյան» (1848—1851) պարբերականները, ինչպես նաև պատմական, ուղեգրական, գեղարվեստական, մանկավարժական գործերը։

Հայկական տպագրության Կ. Պոլսի օջախն սկսում է գործել ղեկավար XVI դարից։ Վենետիկից հետո այս քաղաքն առաջինն էր, որտեղ տպվեց հայերեն գիրքը։ XVI դ. երկրորդ կեսին (1567) այստեղ հիմնվում է հայկական տպարան։ Այն ստեղծել էր Արղար Դպիրը կամ Արղար Քոթատեցին, որը երկար ժամանակ համարվել է մեր առաջին տպագրիչը։ Բոլոր գեղքերում նրա կատարած աշխատանքի կուտուրական նշանակությունը մեծ է, նա երկրորդ հայ տպագրիչն է։ Արղար Դպիրի տպագրական-հրատարակչական գործունեությունից հետո մոտ հարյուր տարի այս օջախում հայերեն գրքեր չեն տպվել։ Մի-

այն XVII դ. երկրորդ կեսերից սկսած հիմնվում են երեմիա Քյումյուրճյանի, Գրիգոր Մարզվանցու, Աստվածատուր Գաշտենցի տպարանները։ Սրանցից մասնավորապես նշանավոր է եղել Գրիգոր Մարզվանցու տպարանը։

XVIII դ. Կ. Պոլսում գործող հայկական տպարանների մեջ ամենաառաջնակարգ տեղ է զբաղում Աստվածատուր Գալիբի հիմնած տպարանը (1699), որն իր գոյությունը պահպանել է ավելի քան 150 տարի։ Հիմնադրի մահվանից հետո նրա գործը շարունակել են ժառանգները (զավակները, թոռները, թոռան թոռները), տպագրիչ-հրատարակիչների մի ամբողջ զերդաստան։ Եվրոպական գրքի տպագրության աստարեղծում նույնպես եղել են ընտանիքներ, որոնց գործը շարունակվել է որդուց որդի։

Աստվածատուր Գալիբի և նրա ժառանգների տպարանում մեկ և կես դարի ընթացքում տպագրվել են բազմաթիվ ու բազմաբովանդակ գրքեր։ Տպագրիչ-հրատարակիչների այս նշանավոր զերդաստանի գործունեությունը իր ամենաբարձր աստիճանին է հասցնում Աստվածատուր Գալիբի թոռ՝ Պողոս Հովհաննիսյանը (Աստվածատրյան), որ հետագայում՝ 1807 թ. մեր տպագրության մեջ հայտնի է Պողոս Արաույան կամ Պողոս Ապուլեյանցի անունով (1742—1835)։ Նա մեր տպագրության նշանավոր դեմքերից մեկն է, յոթանասուն տարի իր կյանքը նվիրել է հայ տպագրության զարգացման գործին։ Արաույանի ջանքերի շնորհիվ բարձրանում է նաև հրատարակությունների որակը։ Նա հոսիներ է հայկական նորանոր տառատեսակներ, գլխագրեր, զարդագրեր և այլն։ Նրա համրավոր տարածվել է ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս։

XIX դ. երկրորդ կեսերից տպագրության այս օջախում շարունակվում է հայ պոլիգրաֆիայի զարգացումը։ Առաջ է գալիս փորագրիչների ու գրաձուլիչների մի ամբողջ սերունդ՝ Հովհաննես Մյուսենտիսյան, Գրիգոր Ռաֆայելյան, Խաչիկ Գրիգորյան, Գրիգոր Տովկեթյան, Միհրան Տեորմեճյան, Հակոբ Մերոնյան և ուրիշներ։ Ստեղծվում են տունձին գրաձուլարաններ, որոնք հայկական և թուրքական տպագրական տառեր և մատակարարում հայ և օտար տպարաններին, անդամ Թուրքիայի սահմաններից դուրս։ Հիշյալ փորագրիչների և գրաձուլիչների շարքում առաջին տեղը զբաղում է Հովհաննես Մյուսենտիսյանը։ Նա իր տպագրական գործունեության առաջին շրջանից սկսած ձեռնամուխ է լինում հայկական տպագրական նոր տառերի հորինման աշխատանքին։ Ժամանակի ընթացքում նրա ձեռքի տակից դուրս են գալիս ավելի կատարելագործված դանդաղ չափերի գեղեցիկ ու նուրբ տառեր։ XIX դ. երկրորդ կեսերից սկսած մինչև մեր դարի 20-ական թվականները Կ. Պոլսում հրատարակվել են շուրջ 300 անուն պարբերականներ։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Կ. Պոլիսը հանդիսացել է հայ տպագրության ամենախոշոր օջախներից մեկը։

Հայկական երկրորդ խոշոր տպագրական կենտրոնը Թուրքիայում եղել է Զմյուռնիան։ Այստեղ XVIII դ. երկրորդ կեսերին Մահմեդի Մարկոսը հիմնել է իր տպարանը և հրատարակել երեք գիրք, որոնց թվում՝ առաջին անգամ՝ եղնիկ Կողբացու «Եղծ ազունգոցը» (1762)։ Այնուհետև հայերեն գրքեր չեն տպվել մինչև XIX դ. 30-ական թվականները։ XIX դ. երկրորդ կեսերին Զմյուռնիայի հայ գաղութում գործել են առաջին ավելի տպարաններ, որոնց մեջ նշա-

նախորդ են եղել Մեսրոպյան վարժարանի, Տեոեյան եղբայրների, Մամուրյանի, Մսերյանի, Քեշիշյանի տղարանները։ Գաղութն ունեցել է եռուսն գրական-հասարակական կյանք։ Բացի բաղձաթիվ գրքերից, այստեղ հրատարակվել են «Արշալույս Արարատյան», «Ծաղիկ», «Մետեորա», «Արևելյան մամուլ» պարբերականները։ Այս օջախի տպագրական-հրատարակչական և ընդհանրապես գրական կյանքի կենտրոնն է եղել Մեսրոպյան վարժարանը, իսկ հետո՝ Տեոեյան եղբայրների տղարանը, որը գործել է 1851 թ. մինչև 1893 թ.։ Տեոեյանները, իրենց շուրջը համախմբելով ժամանակի լավագույն թարգմանիչներին, երկու-երեք տասնամյակի ընթացքում թարգմանել և հրատարակել են հայերեն Շեքսպիրի, Գյոթեի, Վոլտերի, Մոլիերի, Հյուգոյի, Լամարթինի, Մյուսսի, Ժյուլ-Վեռնի, Վալտեր Սկոտի, Դյումայի (հոր), Պրեդյի և շատ ուրիշների դործերը։ Հալ գրքի պատմության մեջ առաջին անգամն էր, որ հայ ընթերցողը այդքան լայնորեն ծանոթանում էր եվրոպական ականավոր գրողների ստեղծագործություններին։

XVIII—XIX դարերում տպագրական օջախներ են հիմնվում Ռուսաստանի հայկական գաղութներում՝ Պետերբուրգում, Նոր-Նախիջևանում, Հաշտախանում, Մոսկվայում, Թիֆլիսում, Թեոդոսիայում, Բաքվում և այլ վայրերում։ Այդ օջախները չափազանց մեծ դեր են կատարել հայ ժողովրդի պատմական կյանքում։

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում հիմնվել է Պետերբուրգում, 1781 թ.։ Տպարանի հիմնադիրն էր Գրիգոր Խալիպարյանցը։ Վեց տարվա ընթացքում Խալիպարյանցի տպարանը լույս է բնծայել մոտ մեկ և կես տասնյակ անուն գիրք, այդ թվում՝ «Այրենարան» (1781, առաջին տպագիր հայերեն այբբենարանը Ռուսաստանում), Կենդանորա Սաֆարյանի «Գիրք, որ կոչի Բանալի գիտության» (1788) և իրեն՝ Խալիպարյանցի աշխատությունը՝ «Գիրք որ կոչի Շափիղ լեզվագիտության» (1788)։ Հայ-ռուսական մշակութային կապերի տեսակետից առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում վերջին երկու գրքերը։ Դրանցից մեկը առաջին ուսանողների պատգիրքն է հայերի համար, մյուսը՝ հայ-ռուսներեն առաջին բառարանն է։ Երկու գրքերն էլ հետադարձում էին միեկնույն նպատակը՝ հնարավորություն տալ հայերին ավելի մոտիկից և լայնորեն հարաբերության մեջ մտնելու ռուսների հետ։ Խալիպարյանցի տպարանը հետագայում գնում է Արզումանը և 1789 թ. փոխադրում Նոր-Նախիջևան, որտեղ և ստեղծվում է տպագրության երկ օջախ։ Պետերբուրգում, բացի Խալիպարյանցի տպարանից, անցյալ դարի տասնական թվականներից գործել է Հովսեփ Հովհաննիսյանի տպարանը, որը 1820-ական թ. վերջերին գնում են Հալապյանները և փոխադրում Մոսկվա։

XIX դ. 60-ական թթ. Պետերբուրգում գործել է Թափայել Պատկանյանի հայկական տպարանը, որտեղ տպագրվել են նրա և իր հոր՝ Գարրիել Պատկանյանի երկերը։ Այստեղ էլ տպագրվում նաև առաջին հայերեն լրագիրը Պետերբուրգում՝ «Հյուսիսը» (1863—1864)։ Պետերբուրգում եղել են և ուրիշ հայկական տպարաններ, որոնց մեջ ամենաբնիկունը «Պուշկինյան արագատիպը» էր։ Հայերեն գրքեր Պետերբուրգում տպագրվել են նաև ոչ հայկական տպարաններում՝ Գիտությունների ակադեմիայի, Յանսոնի, Բաքստի, Գոլովինի, Սկոբոդովի, Կիրեբովի և ուրիշների։ Վերջին երկու տպարաններում են տպագրվել Ղևոնդ Երեցի «Հայոց պատմությունը», Թովմա Արծրունու «Պատմություն տանն Արծրունյաց», Իմիշկ Բուզադյանի գրքերը, Ս. Գուլամիրյանի «Արարս»

գրական-գեղարվեստական հանդեսը (1887—1898)։ Պետերբուրգի օջախում են տպագրվել հայագետներ Ն. Մառի, Ն. Ադոնցի, Ք. Պատկանյանի և ուրիշների աշխատությունները։

Պետերբուրգից հետո Ռուսաստանում երկրորդ խոշոր տպագրական օջախն է եղել Մոսկվան։ Հաղարչյան ճեմարանին կից 1829 թ., Պետերբուրգից փոխադրված Հովսեփ Հովհաննիսյանի տպարանի բաղաձիվում է առաջին հայկական տպարանը Մոսկվայում։ Մինչ այդ Մոսկվայում հայերեն գրքեր տպագրվել են Ավգուստ Սեմենի տպարանում։ Մոսկվան խոշոր գեր է կատարել մեր տպագրության և առհասարակ հայ մշակույթի զարգացման պատմության մեջ։ Մասնավորապես պետք է նշել Հաղարչյան ճեմարանի հրատարակչական լայն գործունեությունը։ Մոսկվայում է հրատարակվել հայ հասարակական կյանքում մեծ դեր խաղացած «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858—1864)։ Բացի Հաղարչյան ճեմարանի տպարանից, Մոսկվայում բացվում են և ուրիշ հայկական տպարաններ, որոնց մեջ աչքի է ընկել Մ. Բարխուդարյանի տպարանը։ XIX դ. երկրորդ կեսերից շարունակվել է հայերեն գրքերի տպագրումը օտար՝ Գոթիկի, Հերբեգի, Բառցուկի և ուրիշների տպարաններում։

Որպես հայկական տպագրության օջախ հայ գրքի ու տպագրության պատմության մեջ բացառիկ տեղ է զբաղում Թիֆլիսը։ Առաջին հայկական տպարանը այս օջախում հիմնվում է 1823 թ., Ներսիսյան գաղութին կից։ Մինչև 1830 թ. այստեղ լույս են տեսել երեսուն անունից ավելի գրքեր։ Այնուհետև, մոտ մի տասնամյակ զաղարից հետո, 1841 թ. սկսած, այս տպարանը շարունակում է գործել մինչև 60-ական թվականները։ Այս ժամանակաընթացքում լույս են տեսել պատմական, գեղարվեստական, ուսումնական, կրոնական և այլ բովանդակությամբ մի շարք գրքեր, որոնց թվում հաշատուր Արուվյանի «Վերք Հայաստանին» (1858)։ 1846 թ. այս տպարանում է հրատարակվել ռուսահայ առաջին պարբերականը՝ «Կովկաս» լրագիրը, իսկ 1850-ական թվականներին՝ «Մեղու Հայաստանի»-ն։

XIX դարի երկրորդ կեսերին Թիֆլիսում բացվում են նոր տպարաններ։ Որանց մեջ առաջնակարգ տեղ էր զբաղում Մեկրումյան-Էնֆիաճյան (կարճ ժամանակից հետո՝ «Էնֆիաճյան և ընկ.») տպարանն ու ձուլարանը։ Տպագրիչ-հրատարակիչ Էնֆիաճյանը առաջինն էր, որ կովկասահայոց տպագրության մեջ գործածեց Վրենյայի նորածն տառերը, իր կողմից որոշ փոփոխություններ մտցնելով նրանց մեջ։ Նրա տառածուլարանը տպագրական տառեր է մատակարարել մյուս տպարաններին։ Այս տպարանում են լույս ընծայվել Ն. Արուվյանի «Նախաշավիղ կրթության» (1862), «Պարապ վախտի խաղաղիք» (1864), Սունդուկյանի «Գիշերվա սարբը խեր է» (1866) և այլ գրքեր, ինչպես նաև «Մեղու Հայաստանի», «Կոռնկ Հայոց աշխարհի», «Փորձ» և ուրիշ պարբերականներ։ 1880-ական թթ. սկզբներին Էնֆիաճյանի տպարանը անցնում է Ռոտինյանին։ 1870-ական թթ. սկսած Թիֆլիսում հետզհետե բացվում են Մարտիրոսյանների, Վարդանյանի, Տիգ. Նազարյանի («Արոր»), «Հերմես», «Մամուլ» և ուրիշ հայկական տպարաններ։ Իր երկարակեցությամբ, տպագրած գրքերի քանակով և հատկապես բարձրորակ տպագրություններով աչքի է ընկել Մարտիրոսյանների տպարանը։ Բացի հայկական տպարաններից, բազմաթիվ հայերեն գրքեր ու պարբերականներ են հրատարակվել նաև Թիֆլիսի ոչ հայկական տպարաններում։

Թիֆլիսի տպագրական օջախում անցյալ դարի վերջին քառորդից սկսած գործել են մի շարք հայկական հրատարակչական կազմակերպություններ, որոնցից բեղմնավոր են եղել «Թիֆլիսի ընկ. հայերեն գրքերի հրատարակչություն», «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերություն», «Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն», «Ստ. Լիսիցյանի և ընկ.» հրատարակչությունները։ Մինչև մեր դարի 20-ական ինվանները տպագրական այս օջախում լույս են տեսել բազմաթիվ և բազմաբովանդակ՝ հասարակական, բանասիրական, գեղարվեստական, ուսումնական, դյուցադասական և այլ հայերեն գրքեր և մոտ երկու հարյուր անուն պարբերականներ։

Հայկական բնաշխարհում առաջին տպարանը կազմակերպվել է 1771 թ., էջմիածնում, հայ գրքի առաջին տպագրությունից մոտ 260 տարի հետո։ Տպարանը հիմնվել է Սիմեոն Կաթողիկոս Երևանցու ջանքերով։ Մախքերը հոգացել է Մադրասում տպրոզ ջուղալեցի Գրիգոր Չաքիկենցը։ Վերջինիս նյութական օժանդակությամբ է. որ Սիմեոն Երևանցին մի քանի տարի հետո տպարանին կից հիմնում է նաև սեփական թղթի գործարան։

XIX դ. երկրորդ կեսերին էջմիածնի տպարանը վերանաբարանդում է տպագրական նոր մեքենաներով ու նոր տառատեսակներով։ 1870-ական թթ. մինչև մեր դարի 10-ական թվականները տպարանի գործունեության ամենաառաջնավետ շրջանն է եղել։ Լույս են տեսել բազմաթիվ հրատարակություններ՝ պատմական, բանասիրական, մասնավորապես հայագիտական, եկեղեցական և այլ բովանդակությամբ։ Ուշագրության արժանի են Սիմեոն Երևանցու «Ջամբուր» (1873), «Ճաշոցը» (1872), «Չալնադրյալ շարականը» (1875), Մխիթար Գոշի «Բատաստանագիրքը», ինչպես նաև պատմիչներ Ռուստանյանի, Մատթեոս Ուսահեցու, Զաքարիա Սարգիսյանի, Կարակ Պավրիմեզու պատմությունները։ Այստեղի և Թիֆլիսի հայագետների համատեղ աշխատակցությամբ պատրաստվել և տպագրվել են Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի պատմությունների գիտական հրատարակությունները։ Էջմիածնում են տպագրվել Գ. Տեր-Մկրտչյանի (Միսրան), Մ. Արեղյանի, Հ. Մանանդյանի, Գ. Հովսեփյանի, Հ. Աճառյանի, Կ. Կոստանյանի, Կ. Տեր-Մկրտչյանի և շատ ուրիշների հայագիտական աշխատությունները։ Այստեղ է հրատարակվել «Արարատ» հայագիտական ամսագիրը։

Երևանում հայկական տպագրությունը սկսվել է XIX դ. վերջին քառորդից։ Առաջին տպարանը 1876 թ. հիմնել է Զաքարիա Գևորգյան-Հակոբյանը, որին հետագայում ընկերակցել է էմին Տեր-Գրիգորյանը։ 1880 թ. Զաքարիան հեռանում է և էմին Տեր-Գրիգորյանը մնալով մենակ՝ շարունակում է գործը։ մինչև դարավերջը։ Այս տպարանում լույս են տեսել մի շարք գրքեր, ինչպես և էմին Տեր-Գրիգորյանի երկասիրությունները, Երևանի առաջին պարբերական «Պսակ» լրագիրը (1880—1884)՝ Վասակ Պաղաջանյանի խմբագրությամբ։ Պաղաջանյանը կազմակերպում է իր սեփական տպարանը, որտեղ բացի «Պսակ»-ից տպագրվել է նաև Լ. Տիգրանյանի «Առողջապահական թերթը» (1881—1884)։ Հետագա տարիներին Երևանում բացվում են մի քանի մասնավոր տպարաններ՝ «Կուլտուրա», «Ուրարտու», «Լույս», որոնցում տպագրվել են պարբերականներ և գրքեր։

Այլերանդրադրում տպագրությունը սկսվել է նույնպես XIX դ. վերջին քառորդից։ Այստեղ 1876 թ. բացվել է Գևորգ Մանասյանի տպարանը, հետագայում՝ Արշաճամ Մալխասյանի, Կարապետ Ափինյանի և ուրիշների տպա-

բանները: Այս տպարաններում լույս են տեսել ուսումնական, գեղարվեստական և այլ բովանդակութեամբ գրքեր, ինչպես նաև պարբերականներ: XIX դ. վերջերին և XX դ. սկզբին տպարաններ են բացվում Արևելյան Հայաստանի ու Ռեզրկովկասի նաև մի քանի ուրիշ վայրերում՝ Բաքում, Նոր-Քաջաղետում, Գորիսում, Ախալցխայում, Ախալքալաքում և այլուր:

Արևմտյան Հայաստանում տպագրությունը մուտք է գործել XIX դ. կեսերին: Առաջին տպարանը կազմակերպվում է Վանում. 1858 թ., Մկրտիչ վարդապետ Խրիմյանի ջանքերով: Խրիմյանը, Կոստանդնուպոլսում հիմնած իր տպարանում 1855—56 թթ. «Արծաթի Վաստուրականի» իր ամսագրի մի քանի համարներ հրատարակելուց հետո, տպարանի սարքավորումով վերադառնում է հայրենի քաղաք՝ Վան, ուր վարագա վանքին կից հիմնում է համեմատի տպարան, որտեղ և շարունակում է հրատարակել ամսագիրը: Տպարանում լույս են տեսնում մի քանի գրքույկներ, որոնց թվում վանեցի գրող Տիգրան Էմիրճանյանի «Ողբերգությունը» (1862): Այնուհետև Խրիմյանը 1863 թ. փոխադրվում է Մուշ, ուր տանում է և իր տպարանը: Այստեղ Գարեգին Սըրվանձյանի խմբագրությամբ տպագրվում է «Արծաթի Տարոն» պարբերականը (1863—1865): Անցյալ դարի 70-ական թթ. տպարանը նորից փոխադրվում է Լարագ, որտեղ վերականգնվում է «Արծաթի Վաստուրականի» ամսագրի հրատարակությունը: 1884 թ. թուրքական իշխանությունները բռնադրվում են տպարանի և վարագա վանքից փոխադրված Վան՝ թուրքական մի թերթ տպագրելու համար: Չնայած դրան, հայ տպագրությունը Վանում ընդհատումներով շարունակվում է մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Վանում տպագրվել են մի քանի պարբերականներ, որոնց թվում և «Վան-Տոսպը»: Թուրքական սահմանադրության տարիներին տպարաններ են բացվում Էրզրումում, Խարբերդում, Նրզնկայում, Ագանկայում, Տրապիզոնում և այլուր, որոնք չեն եղել ևս շատ կարճատև կյանք: Այդ տպարաններում լույս են տեսել գեղարվեստական պարբերական հրատարակություններ:

Երբ մի ընդհանուր հայացք ենք ձգում տպագրության մեր օջախների կատարած աշխատանքի վրա, տեսնում ենք, որ հայ տպագիր գիրքն ու խոսքը, ինչպես նշվել է, մեծ դեր են կատարել անցյալում: Սակայն պետք է նկատել, որ գտնվելով տարրեր երկրներում և գործելով տարրեր կուլտուր-պատմական միջավայրում, այդ օջախները, բնականաբար, չեն կարողացել տանել այդ դերը՝ համառար բարձրությամբ: Մյուս կողմից, որ և գլխավորն է, պատմական ու քաղաքական որոշ պայմանների ու իրադարձությունների հետևանքով այդ օջախներն ոչ բոլորն են կարողացել լինել ստաջավոր մշակույթի, առաջադեմ քաղաքացիների տարածողներ:

Այս առումով Ռուսաստանի տպագրական օջախների գործունեությունը տարբերվում է Ռուսիայի և արևմտահայ մյուս օջախների գործունեությունից. ըստ որում այդ տարբերությունը հատկապես ակնառու է XIX դ. կեսերից: Ռուսաստանի օջախներում է, որ նշված ժամանակից սկսած հետզհետե լայն ծավալ է ստանում հասարակական-քաղաքական բովանդակությամբ գիրքը: Այստեղ է, որ ստեղծվում է մարքսիստական գիրքը: Անշուշտ, այդ երևույթի ունի իր պատմական նախադրյալները, պատմական հիմքերը: Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միանալուց հետո մեր ժողովուրդը հնարավորություն ունեցավ անմիջականորեն շփվելու ռուսական առաջավոր հոսանքների, առաջադիմական մտքի հետ, ավելի լայնորեն հաղորդակից եղավ եվրոպական

ու համաշխարհային մշակույթին: XIX դ. երկրորդ կեսից հայ ժողովուրդն ապրում է հասարակական ու մշակութային կյանքի զարգացման բուռն վերելք: Աշխուժանում է ազգային-ազատագրական պայքարի պրոպագանդան: Այնուհետև առաջ են դալիս հասարակական հակադիր հոսանքներ և առաջ՝ քաղաքական կուսակցություններ: Հայ հասարակական կյանքի այս բուռն ու սրընթաց զարգացումը իր բոլոր կողմերով արտացոլվում էր գրքի ու պարբերական մամուլի մեջ: Զարգանում է բազմաբովանդակ հասարակական-քաղաքական գիրքը, մարտական հրապարակախոսությունը, գեղարվեստական գիրքը համակվում է խոր հասարակական գաղափարներով, ազգային-ազատագրական ձգտումներով: Գարի վերջին տասնամյակներում բանվորական շարժման հետ միասին հայ իրականության մեջ ներթափանցում է մարքսիզմի գաղափարախոսությունը:

XX դ. առաջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ սկսվում է լայն գործունեություն է ծավալում բոլշևիկյան հայ պարբերական մամուլը: Հրատարակվում են Մարքսի, Էնգելսի և Լենինի մի շարք հոդվածներն ու աշխատությունները, ինչպես նաև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և մյուս ականավոր հայ բոլշևիկների գործերը: Լույս են տեսնում գրական-ղեկարավետական մի քանի ժողովածուներ, ուր ամփոփված են պրոլետարական գրականության նմուշները:

* * *

Հայ գրքի պատմության մեջ միանգամայն նոր էտապ սկսվեց սովետական կարգերի օրոք: Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը հայ տպագիր գիրքն իր բովանդակությամբ համարյա նույնն է եղել տպագրության մեր բոլոր օջախներում: Հրատարակվել են կրոնական, կրոնա-բարոյախոսական, պատմական, աշխարհագրական, լեզվաբանական, ուսումնական, բժշկական և այլ բնույթի բազմաթիվ գրքեր: Թույլ զարգացում է ունեցել հատկապես հասարակական-քաղաքական գիրքը: Բացի դրանից գիտության շատ բնագավառների գծով գարեր շարունակ ոչ մի գիրք չի հրատարակվել:

Հայ գիրքն ու գրականությունը չգերազանցված առօրինակ հասան, հարուստացան և զարգացան զիայն սովետական շրջանում, հայկական պետականության պայմաններում: Հայ տպագիր գիրքն ու խոսքը ստացան նոր բովանդակություն և նոր նպատակ, այն է՝ պրոպագանդել մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, գիտելիքներ տալ ժողովրդի լայն խավերին, դաստիարակել նոր հասարակարգ կառուցողներին, բարձրացնել մասսաների գիտակցական-ստեղծագործական գործունեությունը: Սովետական իշխանության տարիներին հայ ժողովուրդն ապրել է աննախընթաց կուլտուրական վերելք, կերտելով ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական իր կուլտուրան: Սովետահայ գիրքը մտել է կոմունիզմ կառուցող ժողովրդի կենցաղի մեջ, դարձել մեր աշխատավորության առաջնակարգ պահանջներից մեկը: Այն շարունակաբար կատարում է քաղաքական, դաստիարակչական, գիտական և կուլտուրական իր մեծ ու պատվավոր դերը:

Սովետական կարգերի օրոք հայ գիրքն ու գրականությունը դարձան ժողովրդի սեփականություն: Եթե նախառևույցցիոն շրջանում հայերեն գիրքը հրատարակվում էր փոքր տպաքանակներով (մինչև XIX դ. հայ գրքի տպաքանակը եղել է միջին հաշվով 400—500 օրինակ), ներկայումս Սովետական Հա-

յատատանում գրքի տպաքանակը այնպիսի չափերի է հասել, որի մասին անցյալում երազել անգամ հնարավոր չէր: Տպագրվում են գրքեր մի քանի տասնյակ հազար օրինակով, ըստ որում շատ հաճախ այդպիսի տպաքանակով գրքերը սպառվում են կարճ ժամանակամիջոցում: Պետական գրատպատի տվյալներով, ներկայիս Հայկական ՍՍՌ սահմաններում 1913 թ. լույս է տեսել 55 անուն գիրք՝ 80 000 օրինակ ընդհանուր տպաքանակով: Մինչդեռ միայն 1960 թ. մեր տեսլուրիկայում լույս է տեսել 1247 անուն գիրք՝ 6 913 900 օրինակ ընդհանուր տպաքանակով:

Սովետական Հայաստանը անցյալից ժառանգություն ստացավ երկու-երեք տղապատիկ տղարան՝ իրենց հին մեքենաներով ու հնամաշ տառերով: Կերկայումս Սովետական Հայաստանում ստեղծվել է պոլիգրաֆիական մեծ ու հարուստ բազա: Տպարանների թիվը հասնում է մի քանի տասնյակի: Սովետական տարիներին լուրջ տշխուստանք է տարվել հայկական պոլիգրաֆիայի զարգացման, մասնավորապես տպագրական նոր, գեղեցիկ, դյուրընթեռների տառատեսակներ ստեղծելու ուղղությամբ: Սովետական իշխանության հենց ստաջին տարիներին կառավարությունը գրադվեց առաջին անգամ: 1958 թ. մրցանակաբաշխություն հայտարարվեց տպագրական տառերի բարեփոխման և հարստացման համար, որը տվեց իր գրական արդյունքը:

Ռեսպուբլիկայում գործում են մի շարք խոշոր հրատարակչական կազմակերպություններ: Դեռևս 1921 թ. նրանում հիմնվեց Հայաստանի պետական հրատարակչությունը (Հայպետհրատ), որը մեծ աշխատանք է կատարել և կատարում հասարակական-քաղաքական, գեղարվեստական, մանկա-պատանեկական, ուսումնական և այլ բնագավառների գծով գրականության հրատարակչության գործում: Հետագայում հիմնվում են նոր հրատարակչություններ՝ Հայկոտհրատ, Քաղհրատ, Երուզհրատ, Ուսմանկհրատ և այլն: Դիտական գրքի, այդ թվում և հայագիտական գրականության հրատարակչությամբ գրադվում է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը: Ռեսպուբլիկայում գործում է նաև նրանի պետական համալսարանի հրատարակչությունը: Չորս տասնամյակում Սովետական Հայաստանում տպագրվել է մի քանի անգամ ավելի գիրք, քան նախասովետական շրջանի չորս հարյուրամյակում:

Սովետական Հայաստանում հրատարակվում են գրքեր գիտության բոլոր բնագավառների՝ ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ ճշգրիտ ու կիրառական գիտությունների գծով: Հասարակական-քաղաքական գրականության բնագավառում առաջին տեղը գրավում է մարքսիզմի կլասիկների երկերի, ինչպես և մարքս-լենինյան ուսմունքին վերաբերող գրականության հրատարակչությունը: Հայերեն հրատարակվել են Մարքսի և Էնգելսի գրեթե բոլոր հիմնական աշխատությունները, որոնք ունեցել են շատ վերահրատարակություններ:

Վ. Ի. Լենինի երկերի հայերեն թարգմանությունները լույս են բնծայվել ոչ միայն նրանում, այլև Մոսկվայում (ՍՍՌԻ Ժողովուրդների կենտրոնական հրատարակչություն) ու Վրաստանում: Լենինի բազմաթիվ աշխատությունների, գեկուցումների, հոդվածների, ճառերի առանձին հրատարակություններից բացի, որոնց մեծ մասը ունեցել է բազմաթիվ վերահրատարակություններ, լույս են տեսել նաև թեմատիկ, ընտիր երկերի և երկերի ժողովածուներ: 1941—1959 թթ. հայերեն լույս բնծայվեց ուսանելի չորրորդ հրատարակությունից

Սարգստանոված Լենինի երկերի լիակատար ժողովածուն, որը նշանակալից երկփուլի էղալ՝ սեպտուբրիկայի պաղապարական կյանքում։ Սովետական շրջանում Լենինի երկերից հրատարակվել է 260 պիւր՝ ավելի քան մեկ և կես միլիոն օրինակ տպարանակով։ Մարքսիզմի կլասիկների երկերի հայերեն հրատարակութունների ընդհանուր տպաքանակը քառասուն տարիների ընթացքում կազմում է մոտ երկու և կես միլիոն օրինակ։

Մասնադիտական դրբի հրատարակութունը նույնպես բարձր մակարդակի է հասել։ Հրատարակվել են գրքեր ինչպես ինքնուրույն, նույնպես և թարգմանակա՝ արդյունարերութան, գյուղատնտեսութան, տեխնիկայի, բժշկութան, բնական գիտութունների գծով և այլն։

Սովետահայ գիտական գրբի պատմության մեջ առաջին տեղերից մեկը գրավում է պատմական, գրականագիտական, լեզվաբանական աշխատութունների հրատարակութունը։ Տպագրվել և տպագրվում են սովետահայ պատմաբանների, գրականագետների, լեզվաբանների հետադոտութուններն ու մենագրութունները, ինչպես նաև գիտական հրատարակյամբ լույս են ընծայվում հայ պատմիչների գործերը։

Բուռն կերպով աճել ու պարզացել է գեղարվեստական գրականության հրատարակութունը։ Սովետահայ գրողների հին և նոր սերնդի ներկայացուցիչները հրատարակել են բազմաթիվ չափածո և արձակ գործեր։ Հրատարակվել են Ն. Արուստանի, Պ. Պոռչյանի, Ռ. Պատկանյանի, Բաֆու, Մերենցի, Գ. Սուսդուկյանի, Մուրացանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ղ. Աղայանի, Շիրվանդադերի, Հովհ. Թումանյանի, Նար-Դոսի, Ավ. Իսահակյանի, Վ. Փափաղյանի, Եր. Օտյանի, Գ. Զոհրապի, Գ. Վարուժանի, Սիամանթոյի, Վ. Տերյանի, Մ. Մեծարենցի և ուրիշ հայ դասական գրողների երկերը։ Բացի դրանից, առաջին անգամ հայ գրականության պատմության մեջ հրատարակվել են մեր մի շարք դասական գրողների (Արուստան, Նալբանդյան, Սուսդուկյան և ուրիշներ) երկերի լիակատար ակադեմիական ժողովածուները։ Միայն Հովհ. Թումանյանի երկերը քառասուն տարիների ընթացքում հրատարակվել են 115 անգամ՝ մեկ միլիոն երկու հարյուր հազարից ավելի ընդհանուր տպարանակով։ Ակադեմիկոս Մ. Արեղյանի և պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի ջանքերով իրականացվեց «Սասունցի Դավիթ» Լյուսի հիսուն պատումների գիտական հրատարակութունը՝ երկու մեծածավալ հատորներով (երեք գրքով)։

Սովետական տարիներին հայ գեղարվեստական գրականութունը հարբատացել է Սովետական Միութան ժողովուրդների և առաջին հերթին ոուս ժողովրդի ինչպես դասական, նույնպես և սովետական շրջանի գրողների երկերով։ Բացի դրանից լույս են տեսել դեմոկրատական երկրների դասական և ժամանակակից գրողների մի շարք երկերի հայերեն թարգմանութունները։ Սովետական շրջանում հայերեն հրատարակվել են Հոմերոսի պոեմները, Էսքիլոսի ողբերգութունները, արեմտակորոպական դասական գրողներ Շեքսպիրի, Միլթոնի, Մերիանտոնի, Շիլլերի, Գյոթեի, Դանթեի, Ֆլորերի, Բալզակի, Զյուգլի, Ռոմանի և շատ ուրիշների ստեղծագործութունները։

Սովետական Հայաստանում գիրքը հրատարակվում է բարձր կուլտուրայով, տպագրության ժամանակակից տեխնիկայի պահանջներին համապատասխան։ Մասնավորապես իր գեղարվեստական ձևավորմամբ, իլյուստրացիաներով, գունատիպ տպագրությամբ աչբի է ընկնում գեղարվեստական

գրականությունը. այդ աշխատանքի մեջ ներգրավված են ականավոր գրա-
ֆիկներն ու նկարիչները:

Աշխարհաթափառ Հայ գիրքը, իր ստեղծող ժողովրդի նման, ղեկերելով
երկրից երկիր, ի վերջո, շնորհիվ Սովետական իշխանության, իր հանդիսան
ու հանգրվանը գտավ մայր հողի վրա, հարազատ ժողովրդի մեջ: Ծիշա է, ճա-
կատագրի բերումով օտար երկրներում գեռես գոյություն ունեն հայկական դա-
դուքներ, գեռես այդ գաղութներում տպագրվում են գրքեր ու պարբերական-
ներ, սակայն Հայ գիրքի ու տպագրության կենտրոնը ներկայումս ոչ թե գաղութն
է, այլ Սովետական Հայաստանը:

450-ЛЕТНИЕ АРМЯНСКОГО КНИГОПЕЧАТАНИЯ

А. С. БАБАЯН

(Р е з ю м е)

Во втором десятилетии XVI в. в Венеции армянским первопечатником Акопом Меганпартом напечатано и выпущено в свет пять названий армянских книг. К числу этих книг относится первая армянская печатная книга «Парзатумар» («Святцы»), вышедшая в 1512 г.

Факт появления печатного слова в столь раннюю эпоху — крупное явление в истории культуры армянского народа. Армения в продолжение долгих веков была под тяжелым игом Ирана и Турции. Эти деспотические восточно-феодальные страны лишали армян какой-либо возможности для культурно-просветительной работы, в том числе и для книгопечатания. Значительные массы армянского народа вынуждены были покидать родную землю и уходить в другие страны. Они основывали там типографии, создавали печатную литературу. Поэтому первая армянская печатная книга появилась не на родной земле, а в Венеции.

С основанием в Венеции первого очага армянского книгопечатания постепенно стали появляться все новые и новые центры армянской печатной книги — в армянских колониях Константинополя, Рима, Львова, Милана, Парижа, Ливорно, Амстердама, Марселя, Измира, Лейпцига, Падуи, Лондона, Мадраса, Петербурга, Астрахани, Калькутты, Вены, Москвы, Тифлиса и т. д. Только в последней четверти XVIII в., спустя 260 лет после издания первой армянской книги, в Эчмиадзине была организована типография и бумажная фабрика (1771). Этим замечательным событием ознаменовалось начало книгопечатания и издательского дела также и в Армении.

Самыми передовыми очагами армянского книгопечатания были основанные в России (Петербурге, Москве, Тифлисе, Баку и пр.). Это обуславливалось исторически прогрессивным актом присоединения Восточной Армении к России. Армянский народ приобрел возможность приобщиться к передовым течениям русского народа, идти в ногу с русской прогрессивной мыслью, соприкоснуться с европейской и всемирной культурой. Армян-

ская общественная и культурная жизнь начинает развиваться особенно бурно со второй половины XIX в. С конца XIX в., с развитием рабочего движения, в армянскую действительность закономерно проникает марксистская идеология.

Развитие общественной жизни армянского народа отразилось также на книгопечатании и периодической печати. Возникает общественно-политическая литература и боевая публицистика. Начинается печатание марксистской литературы. Художественная литература пропитывается прогрессивно-демократическими устремлениями. Однако армянская литература по-настоящему начала развиваться только в советский период, в условиях армянской советской государственности.

Наряду с огромными культурными завоеваниями Советской Армении значительное место занимают достижения в области книгоиздательства. Впервые в армянской действительности издаются книги по всем отраслям науки — как по общественно-политическим, так и по естественным и прикладным. Лишь после установления Советской власти в нашей стране армянское письмо и литература стали народным достоянием. Ныне армянский народ может гордиться не только высокой идейностью своей литературы, но и массовым ее распространением в народе. За несколько десятков лет в Советской Армении напечатано неизмеримо больше книг, чем за четыре столетия дореволюционного периода, т. е. за время от первой армянской печатной книги до установления в Армении советского строя.